ԵՊՀ ԻՄ-ի 2017-2018թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը կրթական և գիտամշակութային հաստատություն է, որն իր գործունեությամբ նաև նպաստում է սահմանամերձ Տավուշի մարզի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի զարգացմանը:

Մասնաճյուղի գործունեությունն իրականացվում է նրա 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա, որում կարևորվում է որակի ներքին ապահովման գործընթացների ներդրումը և նրա շարունակական բարելավումը: Հաշվետու ուստարում որակի ներքին ապահովման գործընթացների շրջանակներում իրականացվել է փաստաթղթային հիմքերի համալրում, վերանայում և ներդրում, պարբերաբար կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ կրթական ծրագրերի ղեկավարների և 9 աշխատանքային խմբերի, 11 ամբիոնների վարիչների, ֆակուլտետների 4 դեկանների, ստորաբաժանումների ղեկավարների և ուսանողների հետ, նրանց տրվել են խորհրդատվություններ, կատարվել են ներքին և արտաքին շահակիցների կրթական կարիքների ուսումնասիրություններ, հավաքագրված տվյալների վերլուծության հիման վրա կազմվել են համապատասխան առաջարկությունների փաթեթներ, ապահովվել է մասնաճյուղի կայքէջի արդյունավետ գործունեությունը, ընդ որում՝ գործարկվել են նաև կայքի ռուսերեն և անգլերեն տարբերակները:

Ուրախությամբ պետք է փաստել, որ մասնագիտական կրթության կառավարման յուրահատուկ մոդելի՝ բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտի» ներդրման շնորհիվ մասնաճյուղում ստեղծվել է ինքնազարգացող մանկավարժական յուրահատուկ միջավայր: Համաձայն մասնաճյուղի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական պլանի՝ կրթական ծրագրերի ղեկավարներն իրենց աշխատանքային խմբերով իրականացրել են

կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում ՀՀ որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին համապատասխան, ծրագրի և նրա բաղկացուցիչ մասը կազմող դասընթացների կրթական վերջնարդյունքները համապատասխանեցվել են դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցման տեսանկյունից: Ուսումնասիրությունների համաձայն՝ դասախոսներն իրենց գիտական գործունեության արդյունքները ներառում են դասախոսություններում, դասընթացները կազմակերպում են բավարար մակարդակի հետազոտական տարրի ընդգրկմամբ՝ դրա միջոցով ուսումնառության ընթացքում ուսանողի մեջ ձևավորելով վերլուծական և քննադատական հմտություններ:

Մասնաճյուղը հպարտանում է տարածաշրջանի աշխատաշուկայում մրցունակ իր շրջանավարտներով, որոնց մասին են վկայում մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների արտահայտած բարձր կարծիքները և նրանց տված գնահատականները: Ըստ տարածաշրջանի գործատուների՝ մասնաճյուղի շրջանավարտների գերակշիռ մեծամասնությունն օժտված է բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդ մասնագետի այնպիսի որակներով, որոնք ժամանակակից աշխատաշուկայում նրանց դարձնում են լիարժեք մրցունակ: Այդ կարծիքները միաժամանակ վկայում են, որ բուհի ղեկավարությունն ու համապատասխան կառույցներն իրապես կարևորում են բուհ-գործատու համագործակցությունը և ուսումնառության գործընթացի բարելավմանն ուղղված նրանց առաջարկները: Նշենք, որ 2017 թ. առկա ուսուցման 165 շրջանավարտներից 37-ը աշխատանքի է անցել հենց 1-ին տարում:

2017/2018 ուստարում միջազգային չափանիշներին համապատասխան երկլեզու (հայերեն և անգլերեն) հավելվածով դիպլոմներ են հանձնվել մասնաճյուղի 271 շրջանավարտի: Գերազանցության դիպլոմ է ստացել 22 շրջանավարտ (20-ը՝ առկա և 2-ը՝ հեռակա ուսուցման): Մասնաճյուղի ունեցած

հեղինակության և մատուցած որակյալ կրթության մասին են վկայում շրջանավարտների երախտագիտության խոսքերը և նրանց տված գնահատականները: Մասնաճյուղի առկա ուսուցմամբ 138 շրջանավարտների 92 %-ը բավարարված է բուհում իր ստացած կրթությունից, 92,6 %-ը՝ պրոֆեսորա-դասախոսական կազմից: Շրջանավարտների 91 %-ը խորհուրդ է տալիս իր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ ԻՄ:

Մասնաճյուղն արձագանքում է աշխատաշուկայի պահանջներին՝ վերաբացելով կամ փոխարինելով մասնագիտություններն ավելի ժամանակակից մասնագիտություններով: 2017/2018 ուստարում արդարացված ներդրում եղավ առկա և հեռակա ուսուցմամբ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն», առկա ուսուցմամբ «Դիզայն» կրթական ծրագրերով ուսումնառության կազմակերպումը:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 10 մասնագիտությունների համար իրականացվող 11 կրթական ծրագրերի գծով ընդունվել է 168 դիմորդ (նախորդ ուստարվա 196-ի փոխարեն), այդ թվում՝ 39-ը անվճար, 129-ը վճարովի, իսկ հեռակա ուսուցմամբ 8 մասնագիտությունների 8 կրթական ծրագրերի գծով՝ 170 դիմորդ (նախորդ ուստարվա 201-ի փոխարեն): Նախորդ ուստարվա համեմատ նկատվել է դիմորդների թվի նվազում առկա և հեռակա ուսուցման համակարգերում:

Մասնաճյուղի դիմորդների շուրջ 99 %-ը (195 դիմորդից 192-ը) Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտներն են: Ընդունելության համակազմի պահպանման և ընդլայնման համար մասնաճյուղը շարունակաբար ակտիվացնում է համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ, ապահովում մասնաճյուղի ակտիվ գովազդարշավը: Կրթօջախը, ունենալով պայմանագրեր մարզի 4 ավագ դպրոցների ու քոլեջների հետ, հստակ կազմված ժամանակացույցով կազմակերպել է

հանդիպումներ մարզի 4 ավագ և 50 հիմնական դպրոցների, ինչպես նաև Իջևանի և Բերդի վարժարանների շուրջ 965 աշակերտների հետ: Պարբերաբար կազմակերպվել են նաև դպրոցների բարձր դասարանների աշակերտների ճանաչողական և գործնական այցեր մասնաճյուղ: Հաշվետու ուստարում համագործակցության շրջանակն ընդլայնվել է. Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման (ՄԿՊԿ) բաժինը հանդիպումներ է կազմակերպել նաև Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի 5 դպրոցներում: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկա-յացուցիչներն այցելել են մարզի դպրոցներ, ակնարկային դասախոսություններ կարդացել աշակերտների համար, տվել են անհրաժեշտ խորհրդատվություն:

Դիմորդների հավաքագրման գործընթացում կարևոր նշանակություն ունեն հանրակրթական տարբեր առարկաների գծով ԵՊՀ-ի հետ համատեղ կազմակերպվող օլիմպիադաները: 2017/2018 ուստարում դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար 13 առարկաների գծով կազմակերպված օլիմպիադաներին մասնակցել են մարզի 4 ավագ, 25 միջնակարգ դպրոցների և 1 վարժարանի շուրջ 285 աշակերտներ, նրանցից 43-ը հաղթահարել է 1-ին փուլը և մասնակցել ԵՊՀ-ում կազմակերպված օլիմպիադայի 2-րդ փուլին: Տարբեր պարգևատրումներ են ստացել 22 աշակերտներ, որոնցից 3-ը՝ 1-ին, 3-ը՝ 2-րդ, 5-ը՝ 3-րդ կարգի դիպլոմներ, 11 աշակերտ ստացել է գովասանագիր:

ԵՊՀ ԻՄ-ն ակտիվորեն շարունակում է համագործակցությունը միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների հետ՝ նրանց բարձր առաջադիմությամբ շրջանավարտների կրթությունը մասնաճյուղում շարունակելու գործընթացի շրջանակներում: Հաշվետու ուստարում կրթությունը շարունակելու նպատակով քոլեջներից ներկայացվել է շուրջ 21 հայտ (նախորդ ուստարվա 18-ի փոխարեն) մասնաճյուղի 5 մասնագիտությունների գծով:

Գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով տպագրվել և դպրոցներին,

հիմնական գործատուներին ու շահագրգիռ այլ կազմակերպությունների են տրամադրվել ԵՊՀ-ի հրատարակած «Դիմորդի ուղեցույցը», մասնաճյուղի գովազդային բուկլետները (300 օրինակ) և տեսաերիզները: Առաջին կուրսեցիների համար կազմվել և մասնաճյուղի կայքում տեղադրվել է «Առաջին կուրսի ուսանողի ուղեցույցը», որի նպատակն է առաջին կուրսեցիներին ծանոթացնել մասնաճյուղի կառուցվածքին, ուսումնառության կանոններին, ուսանողների իրավունքներին ու պարտականություններին, գիտամանկավարժական գործընթացի կազմակերպմանը և ներհամալսարանական կառույցներին ու նրանց գործունեությանը: Այս ուղեցույցն ունի ոչ միայն մեթոդական, այլև գովազդային կարևոր նշանակություն:

Մասնաճյուղի հարստությունն իր ուսանողներն են: 2017/2018 ուստարում մասնաճյուղն ունեցել է բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ սովորող 1580 ուսանող, նրանցից 1425-ը՝ վճարովի համակարգում:

Պետության կողմից ուսման վարձի (ուսանողական նպաստի ձևով) լրիվ փոխհատուցում է ստացել 117 ուսանող (այդ թվում՝ 4-ը արտամրցութային): Պետական և ներբուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 128 ուսանողների, որոնցից անվանական կրթաթոշակ է ստացել 9 ուսանող: 2017/2018 ուստարում ուսման վարձի մասնակի փոխհատուցումից օգտվել է 260 ուսանող, այդ թվում՝ 101-ը առկա ուսուցման համակարգում:

Հաշվետու ուստարում ուսումնական գործընթացի բարելավման և արդյունավետ կազմակերպման համար մասնաճյուղում կատարվել են լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների և այլ ուսումնական տարածքների վերանորոգման կամ հիմնանորոգման աշխատանքներ, կատարվել է ուսումնական տարածքների տեխնիկական վերազինում, 2 լսարանի համար ձեռք է բերվել 36 նոր նստարան:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնական գործընթացը կազմակերպվել է տեսասարքով համալրված հետևյալ ռեսուրսներով՝ հա-

մակարգչային 4 սրահ, 1 մասնագիտական լաբորատորիա, ինտերակտիվ ուսուցման (On-line) 1 լսարան, 10 լսարան, 1 արվեստանոց, լեզուների ուսուցման 2 մասնագիտական լսարան: Առանձնահատուկ պետք է նշել ԵՊՀ-ի թանկարժեք նվերի՝ էլեկտրոնային տախեոմետրի կիրառության մասին. «Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրի ուսումնառողները դրա միջոցով զարգացնում են իրենց մասնագիտական կարողությունները: Համապատասխան լսարանները և աշխատատեղերը հագեցված են եղել 53 տպող (որից 2-ը գունավոր) և պատճենահանող սարքերով, գործում է անվճար ինտերնետ կապ և ներքին համակարգչային ցանց, որը միավորում է շուրջ 180 համակարգիչ:

Հաշվետու ուստարվա 2-րդ կիսամյակում մասնաճյուղի աշխատակիցների (Ս. Առաքելյան, Է. Կյուրեղյան, Մ. Ճաղարյան) համահեղինակությամբ հրատարակվել է «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի համապատկերում (գիտաուսումնական մտորումներ և փաստեր)» գիրքը: Աշխատանքում ներկայացված են վերջին 5 տարվա ընթացքում անցկացված՝ շահակիցների կարծիքների ուսումնասիրությունների արդյունքներն ու դրանց վերլուծությունը: Հեղինակների նպատակն է եղել բարելավել սովորողների և աշխատակիցների սոցիոլոգիական մշակույթը, դրանով իսկ մեծացնել հասարակական կարծիքի հավաստիությունը, ինչպես նաև մասնաճյուղի ղեկավարությանն օժանդակել կրթօջախի ուսումնակազմակերպչական խնդիրների բացահայտման, դրանց լուծման տարբերակների առաջադրման և մասնագիտական կրթության պատշաճ որակի ապահովման հարցերում:

Համալրվել և վերլուծվել են մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ 2012-2017), կազմվել է համապատասխան հաշվետվություն:

Մասնաճյուղի կարևորագույն ներուժը և հաջողության հիմնական գրավականը նրա բարձրակարգ գիտամանկավարժական կազմն է: Հաշվետու

ուստարում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ 118 դասախոս, այդ թվում՝ 4 պրոֆեսոր (3,4 %), 35 դոցենտ (29,7 %), 48 ասիստենտ և 31 դասախոս (66,9 %), որոնցից գիտական աստիճանով՝ 3 դոկտոր և 64 թեկնածու, ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը 56,8 % է: Մասնաճյուղի դասախոսների միջին տարիքը 48 է. մինչև 35 տարեկան դասախոսների թիվը 24 է (20,3 %), 36-65 տարեկան՝ 83 (70.3 %), 65-ից բարձր՝ 11 (9,3 %): Կանայք կազմում են հիմնական դասախոսական կազմի 46,6 %-ը: 2017/2018 ուստարում մասնաճյուղն ունեցել է 2 դոկտորանտ, 1 ասպիրանտ և 3 հայցորդ: Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող-դասախոս հարաբերակցությունը կազմել է 13,4:

Դասախոսների (հատկապես երիտասարդ) գիտամանկավարժական և մասնագիտական գործունեությունը գտնվում է մասնաճյուղի տնօրենության ուշադրության կենտրոնում, որն աջակցում ու խրախուսում է նրանց ինքնակրթության և ինքնազարգացման բոլոր դրսևորումները: Հաշվետու ուստարում մասնաճյուղի 4 դասախոս երաշխավորվել է դոցենտի գիտական կոչում ստանալու համար, 6 աշխատություն երաշխավորվել է հրատարակության:

Դասախոսների գիտական գործունեությանն աջակցում է նաև մասնաճյուղի «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, որտեղ անվճար տպագրվում են աշխատակիցների հոդվածները: Հաշվետու ուստարում «Ակունք»-ում հրատարակվել է մասնաճյուղի դասախոսների 24 հոդված, որից 6-ը՝ օտար լեզվով: Հրատարակվել են նաև մասնաճյուղի դասախոսների 3 մենագրություն, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 36 գիտական հոդված, զեկուցման 11 թեզիս: 2 դասախոս պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1 դասախոս ընդգրկված է ՀՀ ԳԿ 2 պետական դրամաշնորհային ծրագրերում: 10 դասախոս մասնակցել է 16 գիտաժողովի, որից 6-ը՝ ՀՀ-ում, 4-ը՝ արտասահմանում (որից 3-ը ԱՊՀ երկրներում կայացած միջազգային գիտաժողովներ են): Կիրառական արվեստի ֆակուլտետի 6 դա-

սախոս ընթացիկ ուստարվա ընթացքում մասնակցել է հանրապետական տարբեր ցուցահանդեսների։

2018թ.-ի մայիսին մասնաճյուղում կազմակերպվել է Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական 2 գիտաժողով՝ հումանիտար ուղղվածությամբ, որին մասնակցել է հանրապետության գիտաուսումնական հաստատությունների ավելի քան 50 ներկայացուցիչ, և բնագիտական ուղղվածությամբ, որին մասնակցել են երկու տասնյակ դասախոսներ և ուսանողներ մասնաճյուղից ու Վանաձորի պետական համալսարանից։

ԵՊՀ ԻՄ-ի դասախոսական կազմի մասնագիտական կարողությունները, մանկավարժական հմտությունները, դասավանդման որակը և արդյունավետությունը պարբերաբար գնահատվում են ԵՊՀ-ի կողմից իրականացվող ուսանողական հարցումների միջոցով։ Նշենք, որ 2017/2018 ուստարվա 1-ին կիսամյակի հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են դասավանդողների մասնագիտական և մանկավարժական որակներից (ըստ բոլոր ամբիոնների միջին թվաբանական միավորն կազմել է 4.64)։

Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման գրավականներից է պրակտիկաների ճիշտ և նպատակային կազմակերպումը։ Ըստ մասնաճյուղի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական պլանի՝ վերանայվել կամ կազմվել են ուսանողների գործնական հմտությունների, ինքնուրույն, ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացմանը միտված նպատակային պրակտիկաների ծրագրեր, որոնք իրենց բովանդակությամբ նպատակ ունեն աջակցել ուսանողին կուրսային և ավարտական աշխատանքների իրականացման ժամանակ։ Տարբեր կազմակերպությունների և հիմնական գործատուների հետ իրականացվել են փոխշահավետ համագործակցային հանդիպումներ։ Արտադրական պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի

պահանջները, ուսանողների նախասիրությունները, նաև ուսանողների առաջարկները, որոնք հավաքագրվել են տարբեր ուսումնասիրությունների միջոցով: Հաշվետու ուստարում արտադրական և մանկավարժական պրակտիկա են անցել առկա ուսուցման 173 և հեռակա ուսուցման 222 ուսանողներ, որոնք իրենց պրակտիկան անցկացրել են ՀՀ բնական և պատմական հուշարձանների տարածքում, հնավայրերում և թանգարաններում, մարզի հյուրանոցներում և սպասարկման ոլորտի տարբեր օբյեկտներում, սոցիալական տարբեր ծառայություններում, Անշարժ գույքի կադաստրի Տավուշի մարզային ստորաբաժանումում, Իջևանի անտառտնտեսությունում և Դենդրոպարկում, «Քարարտ» փակ բաժնետիրական ընկերությունում, Իջևանի արվեստի դպրոցում, Տավուշի մարզի դպրոցներում և մանկապարտեզներում:

Հատուկ ուշադրություն է դարձվել ուսումնական (դաշտային) պրակտիկայի կազմակերպմանը, իսկ որոշ ֆակուլտետների մի շարք պրակտիկաներ կազմակերպվել են մեկօրյա կամ 2-4 օր տևողությամբ ավտոբուսային երթուղիների ձևով ՀՀ տարածքում, ինչպես նաև քաղաքամերձ հետիոտն երթուղիներով: Ուսումնական պրակտիկա են անցել առկա ուսուցման 80 և հեռակա ուսուցման 135 ուսանողներ:

Պրակտիկաների վայրերում մասնաճյուղի իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արտաքին շահակիցները առանձնահատուկ նշում են մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական բարձր պատասխանատվությունը, պարտաճանաչությունը, աշխատասիրությունը, նորին ու առավելագույնին ձգտելու ցանկությունը, տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու հմտությունները, ճիշտ և հետաքրքիր հարցադրումներ կատարելու ունակությունները, ստեղծագործական կարողությունները և այլն: Հարցմանը մասնակցած արտաքին շահակիցների 84,9%-ը գերազանց ու լավ են գնահատել մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների տեսական գիտելիքների իմացությունը, 87,9%-ը՝

գործնական հմտությունները, 81,8%-ը՝ մասնագիտական խոսքը, իսկ պրակտիկաների կազմակերպման գործընթացը նրանց 94%-ը որակավորել է բարձր (4.72 միջին գնահատական)։

Ակտիվացվում և ընդլայնվում է համագործակցությունը մասնաճյուղի հիմնական գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ: Մասնաճյուղի 16 ուսանող ընդգրկված է եղել ՀՕՖ-ի «Մաթևոսյան կրթավճար» ծրագրում: Հայաստանի երիտասարդական հիմնադրամի (ՀԵՀ) կողմից 2017/2018 ուստարվա երկրորդ կիսամյակում հայտարարված մրցույթի արդյունքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից կրթաթոշակի է արժանացել 13 ուսանող:

ԵՊՀ ԻՄ-ն իր հեղինակության ամրապնդման, հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով վարում է տեղեկատվության տարածման, զովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն: Մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների գործընթացների, իրադարձությունների, կազմակերպված միջոցառումների, հարցազրույցների, անհրաժեշտ հայտարարությունների, ուսանողական կյանքին և միջավայրին վերաբերող նորությունների լուսաբանումը, տեղեկատվության մատչելիությունն ապահովվում է մասնաճյուղի պաշտոնական կայքի (http://ijevan.ysu.am/) միջոցով (եռալեզու տարբերակի իրականացումն ընթացքի մեջ է), «Facebook» սոցիալական ցանցում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջի, ինչպես նաև մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումների և ուսանողական կառույցների էջերի միջոցով:

Մասնաճյուղի գործունեության թափանցիկության, աշխատակիցների և ուսա-նողների իրազեկվածության ապահովման, գործունեության և ուսման մեջ տեղեկույթի փոխանակման տեսանկյունից մեծ է կայքի՝ որպես աշխատանքի արդյունավետության գերժամանակակից գործոնի դերը: 2018 թ. մայիսին անցկացված հարցմանը մասնակցած մասնաճյուղի առկա ուսուցման 330 ուսանողներից 182-ը (55,2 %) պատասխանել է, որ կայքից օգտվում է «շատ

հաճախ» ու «հաճախ»: Նրանք փաստել են, որ բավարարված են կայքի կառուցվածքից, նորությունների լուսաբանումից, տեղեկատվության ստացման հարմարավետությունից և լիարժեքությունից:

ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքը 2018 թ. օգոստոսի դրությամբ ունի 214 էջ (նախորդ տարվա 204 էջի փոխարեն), տեղադրված է 2280 նյութ, 10211 ֆայլ (նախորդ տարվա 7936 ֆայլի փոխարեն): Կայքի «ԶԼՄ-ները մեր մասին» էջում տեղադրված են մասնաճյուղի վերաբերյալ տարբեր ԶԼՄ-ների կողմից հրապարակված հոդվածներ ու տեսանյութեր: Հաշվետու ուստարում հեռուստատեսությամբ, “YouTube”-ով, տարբեր կայքերով լուսաբանվել է շուրջ 7 իրադարձություն (նորություն):

Մասնաճյուղում տարեցտարի բարձրացվում է ներքին և արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը, որին աջակցում են անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասրահը, էլեկտրոնային հարուստ պաշարները: 2017 թ. դեկտեմբերից գործարկվել է մասնաճյուղի «Էլեկտրոնային գրադարան» կայքէջը, որը 2018 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ դիտվել է 671404 անգամ և ունեցել է 68261 այցելու: Մասնաճյուղի գրադարանային ֆոնդը հաշվետու ուստարում համալրվել է շուրջ 1349 միավոր գրականությամբ և ներառում է 18062 գիրք, որից 7684-ը դասագիրք է, 4635-ը՝ ծրագրային գեղարվեստական, 5671-ը՝ ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրքեր, գրադարանը համալրված է 2687 էլեկտրոնային-տեղեկատվական և 641 այլ նյութերով՝ գիտական տեղեկագրեր ու հանդեսներ, քարտեզներ և այլն: Մեծաքանակ ուսումնագիտական և մասնագիտական գրքեր է հատկացրել Մայր բուհը:

Կազմակերպվում և հաջողությամբ լուծվում են Երևանից ժամանող դասախոսների հանգստի և գիշերելու հարցերը: Ուսումնական մասնաշենքերից ոչ հեռու կառուցված մասնաճյուղի հյուրանոցային համալիրն ապահովում է ավելի քան 65 դասախոսի կենցաղային խնդիրները, հանգստի ու

հարմարավետ աշխատանքի պայմանները: Համալիրն ապահովված է ինտերնետ կապով, կոմունալ բոլոր հարմարություններով:

Մասնաճյուղի ուսանողական և ուսումնագիտական միջավայրի ձևավորման գործում իրենց անփոխարինելի տեղն ունեն ուսանողական համապատասխան կառույցները: Հաշվետու ուստարում ուսանողական խորհրդի (ՈԻԽ) կողմից կազմակերպվել են տարբեր տոների, հիշատակների նվիրված մշակութային և մարզական շուրջ 53 միջոցառումներ, մրցույթներ, հանդիպումներ, կինոդիտումներ, քննարկումներ, բաց դասեր և դասընթացներ: ՈԻԽ-ն ակտիվ համագործակցում է տարբեր կազմակերպությունների հետ: 2017 թվականի ընթացքում ծավալած գործունեության համար մասնաճյուղի ուսանողական խորհուրդը «Լավագույն մարզային ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգում արժանացել է «Հայկյան-2017» մրցանակին:

Ուսանողական գիտական ընկերությունը (ՈԻԳԸ) հաշվետու ուստարում կազմակերպել է 42 գիտական, կրթական ու մշակութային ծրագրեր և միջոցառումներ (գիտաժողովներ, ինտելեկտուալ խաղեր, գիտական և գիտահանրամատչելի զեկուցումներ և սեմինարներ, կինոդիտումներ, ճանաչողական այցեր, ցուցահանդեսներ և այլն): ՈԻԳԸ-ն աջակցել է բուհում Առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական 2 գիտաժողովների կազմակերպման աշխատանքներին:

Ուրախացնում է նաև մասնաճյուղի ուսանողների հետաքրքրվածությունն ու ակտիվ մասնակցությունը միջազգային տարբեր ծրագրերի: 2017 թ. սեպտեմբերին մասնաճյուղի 2 ուսանող մասնակցել է Հայաստանում կայացած Եվրոպական երիտասարդական պառլամենտի 4-րդ միջազգային ֆորումին, հոկտեմբերին 2 ուսանող՝ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության 70-ամյակին նվիրված միջազգային 4-րդ գիտաժողովին, նոյեմբերին 3 ուսանող՝ Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնում անցկացված «Մարզերի հզորացումը բարձր տեխնոլոգիաների խթանմամբ» խորագրով հանրապետական համաժո-

ղովին, 2018 թ. ապրիլին 5 ուսանող՝ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակին նվիրված ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության 5-րդ միջազգային ուսանողական գիտաժողովին, 2018 թ. հունիսին 1 ուսանող և մասնաճյուղի 3 շրջանավարտ՝ «Հայաստանի և Ռուսաստանի թվային նախաձեռնությունները ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացման շրջանակում» խորագրով հայ-ռուսական միջ-տարածաշրջանային 7-րդ համաժողովին և այլն:

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գործունեությունը ինչպես միշտ, 2017/2018 ուստարում ևս գտնվել է ԵՊՀ ուշադրության կենտրոնում: